

## Դիմում-հայտը կարող է մերժվել, եթե՝

- ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն,
- ներկայացված փաստաթղթերը կամ փաստաթղթերում ներկայացված տվյալները չեն համապատասխանում իրականությանը,
- առկա է Հաճախորդի, նրա հետ փոխկապակցված անձանց (նաև (Երաշխավոր(ներ)ի) բացասական վարկային պատմություն,
- Հաճախորդը, նրա հետ փոխկապակցված անձիք (նաև (Երաշխավոր(ներ)ը) ունեն ժամկետնաց վարկային պարտավորություններ,
- Հաճախորդի վարկունակության գնահատումը տվել է բացասական արդյունք (այս դեպքում Դիմում-հայտը պարտադիր մերժվում է),
- ներկայացված փաստաթղթերում առկա տեղեկատվությունը հակասում է փաստացի գործունեության վայր կատարած այցելության ընթացքում բացահայտված հանգամանքներին (փաստերին),
- չի հիմնավորվում վարկի ստացման անհրաժեշտությունը,
- Պատասխանատու բաժնի դեկավարի կամ Պատասխանատու բաժնի Վարկային մասնագետի հիմնավոր կարծիքով վարկի տրամադրումն Ընկերության համար պարունակում է ռիսկեր կամ նրանց հիմնավոր կարծիքով կան այլ հիմքեր.
- առկա են կամ վարկի տրամադրումից հետո կարող են առաջանալ այնպիսի ռիսկեր, որոնք հետագայում կարող են մեծապես նվազեցնել վարկառուի վարկունակության մակարդակը:
- դիմում հայտը կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ հաճախորդը կամ նրա ընտանիքի անդամները դիմել են Ընկերությանը տվյալ Կարգի շրջանակներում վարկ ստանալու խնդրանքով նախորդ երեք ամիսների ընթացքում և ստացել են մերժում:

## Վարկերի տրամադրման նպատակայնությունը

### Բարձրարժեք Գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրություն.

1. Ջերմատների և դրանց ինտեգրալ բաղադրիչների՝ ինչպիսիք են ջեռուցման և օդափոխության համակարգերը, տեղադրում/հիմնում, ընդլայնում կամ վերանորոգում:

2. Ջրի ներտնտեսային կառավարում և ոռոգման տեխնոլոգիաներ, ներառյալ՝

- Կաթիլային ոռոգման համակարգեր ջերմատների, պտղատու և խաղողի այգիների բաց դաշտում աճեցվող մրգերի և բանջարեղենների համար,
- Անձրևացման ոռոգման համակարգեր, մասնավորապես միկրոանձրևացման,
- Սիֆոններ, կարճ խողովակներ, փականներով խողովակ, հիդրանտներով խողովակ,
- Ճկուն խողովակով ոռոգման համակարգեր,
- Հողային հումով առուների երեսպատում,
- Գումարային գոլորշիացման չափիչներ,
- Հողի խոնավության չափիչներ:

3. Պտղատու և խաղողի այգիների, տնկարանների հիմնում, վերանորոգում կամ ընդլայնում, ներառյալ՝

- Տնկիներ,
- Արմատակալեր,
- Խողողի արմատակալեր,
- Շպալերային համակարգեր /հենասյուներ և լարեր/, ծածկում և ստվերարկում:

4. Գյուղատնտեսական սարքավորումների նորացում /արդիականացում/, ներառյալ ստորև նշվածների ձեռք բերումը՝

- նոր տրակտորներ /մինչև 3 տարվա հնություն ունեցող/,
- վար անող սարքավորումներ,
- ցանք անող սարքավորումներ,
- սրսկիչներ,
- բերքահավաքի սարքավորումներ,
- հողի լազերային հարթեցուցիչներ:

### Հետբերքահավաքային գործընթացներ, վերամշակում և մարկետինգ դաշտում և դաշտից դուրս.

- մթերման և համախմբման կենտրոնների հիմնում և/կամ ընդլայնում,
- սառնարանային պահեստներ, սորտավորման, տեսակավորման, փաթեթավորման և չորացման կառույցներ և սարքավորումներ, ներառել սենդվիչային պանելները, օդափոխության համակարգերը, պահեստավորման կոնտեյներները,
- վերամշակման հոսքագծեր և սարքավորումներ,
- սառնարանային և ոչ սառնարանային բեռնատարներ, եղանակով ամբարձիչներ,
- սննդի անվտանգության բավարարման ուղղված վերանորոգման ծախսեր, որակի կառավարման համակարգերի ներդրում և սերտիֆիկացիա /HACCP, ISO/,
- թարմ միրգ-բանջարեղենի վաճառքի տաղավարներ:

### Այլ Ագրոբիզնեսներ.

- մեքենաների կապալի և սպասարկման ոլորտի այլ բիզնեսներ, որոնք աջակցում են փոքր սեփականատերերին,
- ագրոբիզնեսի շուկայավարման և արտահանման ծառայություններ:

### Շրջանառու միջոցներ.

Շրջանառու միջոցների ֆինանսավորումը կարող է ներառվել որպես ընդհանուր վարկի մաս, այն պայմանով որ դրա համար հատկացվող գումարը չպետք է գերազանցի տրամադրվող վարկի 20 %-ը:

### Անթույլատրելի վարկեր.

- վարկեր, որոնք չեն համապատասխանում ՋԴԾ ծրագրի համապատասխանության չափանիշներին,
- ապօրինի նպատակներով վերցված վարկեր,
- վարկեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ բնապահպանական ստանդարտներին և ՀՄԿ

- բնապահպանական ուղեցույցին, ներառելով պետիցիոները,
- վարկեր՝ բնակելի տարածք գնելու, կառուցելու կան այն նորոգելու նպատակներով,
- վարկեր՝ առկա պարտքի մարման նպատակով,
- սպառողական նպատակներով վերցված վարկեր,
- վարկեր ՀՄՀ-Հայաստանին, նրա աշխատակիցներին կամ աուդիտորներին, ցանկացած վարկատուի, վարկատուներին, նրանց աշխատակիցներին, արտաքին աուդիտորներին, մասնագետներին կամ տնօրեններին, ՋԴՇ ծրագրի աշխատողներին,
- մեղվապահության, ձկնաբուծության, սնկարտադրության ցանկացած մանր և խոշոր եղջերավորներ, խոզաբուծություն, ինչպես նաև դրանց հետ կապված ցանկացած գործունեություն, օրինակ շինություններ կամ արտադրանքի վերամշակում,
- հող գնելու նպատակով /հողի բոլոր կատեգորիաներ/,
- խորքային հորերի համար,
- մարդատար մեքենաների համար, նույնիսկ եթե դրանք օգտագործվելու են ֆինանսավորող գործունեության համար,
- 3 տարեկանից ավել հնություն ունեցող տրակտոր ձեռք բերելու համար,
- ՀՄՀ-ի կողմից սահմանված այլ անթույլատրելի նպատակներ  
/http://www.mcc.gov/countries/armenia/032706ArmeniaCompact.pdf/ էլեկտրոնային հասցեում նշված:

## Հավելված 2

### **Վարկառուների նախնական համապատասխանության պահանջները**

1. Վարկառուն նախորդ 12 ամիսների ընթացքում պետք է չունենա հողի հարկի, ոռոգման ջրի ջրօգտագործման վճարման պարտավորություններ:
2. Ֆերմերներ, ովքեր անցել են Ջրից դեպի Շուկա ծրագրի շրջանակներում կազմակերպված վերապատրաստման դասարանային դասընթացի առվագն 75 %-ը և մասնակցել են գոնե մեկ պրակտիկ ջրի ներտնտեսային կառավարման ցուցադրության Ջրից դեպի Շուկա ծրագրի միջոցով /ունենա համապատասխան վկայագիր/:
3. Անհատական ընտանեական տնտեսություններ և անհատ ձեռնարկատերեր, ովքեր ներգրավված են գյուղատնտեսական ծառայությունների մատուցման, մատակարարման կամ գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման գործընթացում:
4. Կազմակերպությունները /սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, բաժնետիրական ընկերություններ, ֆերմերային ասոցիացիաներ, կոոպերատիվներ/, որոնք ներգրավված են գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման, գյուղատնտեսական ծառայությունների մատուցման, մարկետինգի, մատակարարման, ոռոգման սարքավորումների ապահովման՝ որպես դիլլեր կամ մանրածախ վաճառող, գործընթացներում: